# 186 Քրիստոսը մեզ կանչում է փրկության

1. Քրիստոսը մեզ կանչում է փրկության
Եվ հավիտենական խաղաղության,
Ի՞նչ ես դանդաղում վերջին օրերում,
Դու՝ խեղճ պանդուխտ այս մեղքի աշխարհում:

2. Նա քեզանից ոչինչ չի պահանջում,
Այլ կորստից քեզ փրկել է ուզում,
Մի՛ մերժիր այդ սիրո հրավերը,
Հիսուսի առջև բացի՛ր քո սիրտը:

3. Այստեղ թշնամին մարդկային հոգու
Ուզում է, որ դու ապրես խավարում,
Բայց դեռ վառվում է փրկության լույսը,
Քեզ է կանչում հավիտենությունը:

4. Գուցե հաճախ ինքդ էլ ես հասկանում,
Որ մեղքի կյանքն է քեզ ապականում,
Բայց դեռ անհոգության մեջ քնած ես
Եվ կործանման մասին մոռացել ես:

5. Ժամանակը դեռ քեզ է սպասում,
Եվ Աստված քեզ փրկության է կանչում,
Ի՞նչ ես մտածում այս սուղ օրերում
Դո՛ւ, խեղճ պանդուխտ այս մեղքի աշխարհում: